ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԵՐԳ ԵՐԳՈՑԻ

ՍՈՒԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շ-ր-ա-ն-ի-ր-ն.)

5.

Երգ Երգոցի Թարգմանութեան սկզբնագիրը:

Որչափ ստոյգ է թէ հայերէն Ս. Գիրքը Թարգմանուած եւ մանաւանդ սրբագրուած է յունարէն ընտիր բնագիրներու վրայէն, այնքան անստոյգ է եւ զանազան եղբակացութիւններու մղած անոր սկզբնագրին խնդիրը:

Լա Կրոզ Աղեքսանդրիանը, Դր. Կ. Շտայէրնագլ Վեցիջեանը եւ Բերդրոլդ Ղուկիանեանը կը համարին հայերէն Ս. Գրքի սկզբնագիրը, հետեւաբար նաեւ Երգ Երգոցինը: (Ասոնց մասին հմմտ. կոգեան՝ Մակաբէացւոց Բ. Գրքին Թարգմանութիւնը, Վիեննա 1923, էջ 53—61):

Երգ Երգոցն Աղեքսանդրեան սկզբնագիրմը կը մատնանշէ ցուցնելով նմանութիւններ Թ. 106 յունարէն ձեռագրին եւ անոր հետեւորդներուն հետ, որոնց ամենուն (ինչպէս 106ն է) Աղեքսանդրեանի ներկայացուցչութիւնը կը մնայ դեռ խնդրոյ նիւթ:

Ա. 5 Ձեռ. Թ. 300 (MZ) "Յայգեստանի":
9 Թ. 254 (M) "Մանեակ": Z եւ այլ ձեռ. "Մանեակս":
12 Codex Alexandrinus-ի (A = 02) հետ Z "Ծրար ստաշխին է եղբօրորդին իմ ինձ, ի մէջ ստեանց իմոց հանգիցէ, ողկոյզ նոճոյ է եղբօրորդին իմ ինձ, ի մէջ (այգեստանին) այգեստանեայցն Ենգադդայ", այսպէս ունին նաեւ Codex Sinaiticus (א = 01) եւ Codex Ephraemi rescriptus (C = 04). Մինչ յուն. մի քանի բնագիրներ ունին լոկ "Ծրար ստաշխին է եղբօրորդին իմ ինձ ի մէջ այգեստանին Ենգադդայ":
13 Թ. 147, 297. (M) "Յայգեստանի":
Բ. 2 Թ. 297 (M) "Քոյր իմ":
8 Թ. 253 (M) "Ձայն եղբօրորդւոյն իմոյ":
Գ. 1 Թ. 106 (MZ) "Ի գիշերի":
2 Մինչ M յոյն շատ մը բնագիրներու հետ չունի. Z հետեւեալներուն հետ Թ. 23, 106, 147, 155, 157, 159, 248, 252, 254, 296, 300 (A. C.) ունի՝ "կոչեցի զնա եւ ոչ ետ ինձ ձայն":
11 Թ. 106, 155, 161, 248, 252, 254, 296, 300 (MZ) "Ելէք (M) Հայեցարուք դստերք Սիոնի" (դասակարգութիւնը):
Դ. 6 Թ. 106, 147, 155, 159, 161, 248, 252. 253, 154, 297, 300 (MZ) "Մինչեւ տիւն":
8 Թ. (23), 106, 147, 155, 159, 161, 248, 252, 254, 296, 300 (M) "Ահերմոնի", այլք Zի պէս "Հերմոնի":
9 Թ. 147, 157, 159, 300 (MZ) "Քոյր մը":
10 Թ. 106, 147, 159, 161, 248, 252, 253, 257, 300 (MZ) "Պարանոցի քո":
13 Թ. 106 (Z) "Պողովք":
14 Թ. 300 (M) "Փայտիւքն":
15 A Թ. 23, 106, 155, 161, 248, 252, 253, 297, 300 (Z) "Բուրաստանաց" (M) "Պարտիզաց":
Ե. 2 Թ. 106, 253, 300 (MZ) "Եւ արբեցարուք եղբօրորդիք":
2 Թ. 106, 155, 161, 248, 252, 254, 296, 197 (MZ) "Քոյր իմ, մերձաւոր իմ":
10 Թ. 23, 147, 157, 159, 161, 248, 252, 253, 254, 296, 297, 300 (M) "Ի վերայ լուութեան ջրոց" (Z) "Ի վերայ ջրոց լիութեան":
13 Թ. 147 (MZ) "Խնկոց":
16 Թ. 300 (M) "Մերձաւորն":
Զ. 2 Թ. (A) 106, 155, 157, 159, 252, 254, 300 (MZ) "Եւ եղբօրորդին իմ ինձ":
Է. 1 Թ. (A) զի, 106, 147, 155, 157, 159, 161, 248, 252, 254, 296, 300 "Զի գեղեցկացան":
1 Թ. 106, 155, 161, 248, 252, 254, 256 (MZ) "Կոշկոք" (ոչ՝ "քո"):
1 Թ. 254, A (MZ) "Դուստր Ամինադաբայ":
2 Թ. 106, 147, 155, 157, 161, 248, 252, 253, 296, 300 M "Յարմարուն բարձից քոց" Z "Ձեւ բարձից քոց":
2 Թ. 23, 106, 155, 283 M "Գործք ձեռաց արուեստաւորի":
9 Թ. 106, 147, 157, 159, 161, 248, 252, 253, 296, 300 (MZ) "Իբրեւ զգինի":
13 Թ. 23, 253 (MZ) "Զոր ետ ինձ մայր իմ",

Ը· 3 A (Z) "Ձախ Նորա"։
10 A (אֿ) (MZ) "Իբրեւ զաշտարակս"։
10 Թ. 23, 106, 147, 155, 157, 159, 161, 248, 252, 253, 254, 300 (A אֿ) (MZ) "Յաջս Նորա"։

6.

Երգ Երգոցը Հայոց քով։

Երգ Երգոցը Հայերու մէջ միշտ կանոնական գրութիւն ճանչցուած է եւ Իբրեւ այսպիսի նկատուած է եկեղեցական արարողութիւններու եւ մատենագրութեան մէջ։

Կանխաւ արդէն Մկրեան քահանային հետ շարեցինք այն տողերը, որոնց մէջ Երգ Երգոցէն ընթերցուածներ աստուածային պաշտամունքներու ատեն կը կարդացուէին։ Ճաշոցներն ասոնց զօրաւոր ապացոյցներ կը հայթայթեն։

Մատենագիրներու յառաջբերութիւններէն միայն կը յիշատակենք եւ հոս կը զետեղենք այն հատածը, զոր Ագաթանգեղոս իւր Հայոց պատմութեան մէջ (Տփղիս 1909 հրտ. Տէր Մկրտչեանի եւ Կանայեանցի, էջ 218) կը դնէ, որովհետեւ մեզի ծանօթ բնագիրներէն բաւականաչափ կը զարտուղի. "Եղբօրորդեակ իմ, յարիցես զարթիցես, մերձաւոր իմ, սիրելի իմ, բացցես ինձ զդուռս տանն եւ համբուրեսցես զիս ի համբուրից բերանոյ քո. զի առատ են ստինք քո քան զգինի եւ հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս անուշութեան։ Իւղ արկեալ է անուն քո, վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ. զհետ անուշութեան իւղոց քոց ընթացուք մեք. տարաւ զիս արքայ ի սենեակ իւր"։ Քանի որ քիչ յետոյ Երգ Երգոցի մեկնութեանց վրայ խօսք պիտի բացուի, ըսենք թէ վերոյիշեալ խօսքերը Ս· Գրիգորի վարդապետութեան մէջ ինչպէս բացատրուած են։

"Եւ ո՞վ իցէ հարսն, եթէ ոչ եկեղեցի հեթանոսաց կամ ո՞վ իցէ փեսայն եթէ ոչ Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, որ էջ յերկնից եւ նուաճեաց զամենայն յերկրպագութիւն հօր։ Եւ զի՞նչ իցեն երկու առատ ստինքն, եթէ ոչ կտակարանքն Աստուծոյ, որ արբուցանեն զամենայն տգէտս հոգեւոր կաթամբն գիտութեան։ Եւ զի՞նչ իցէ զոր ասէն. "Հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս անուշութեան", եւ թէ "իւղ արկեալ է անուն քո" — զծածութիւն Քրիստոսի եւ զանունն յայտ առնէ եւ համբուրելն սիրոյ նշանակ է, զի եկեղեցի Քրիստոսի եւ Քրիստոս Որդի Աստուծոյ" (Անդ)։

Երգ Երգոցն Իբրեւ այլաբանութեամբ գրուած գիրք մը կարելի չէր որ ժողովուրդը դիւրաւ անոր խորին իմաստներուն խելահաս ըլլար, անոր պատկերաւոր նմանութիւնները լուծէր, անոր համար հին ժամանակներէն սկսած կը տեսնենք Եբրայեցիներու եւ ապա քրիստոնէական դարերու մէջ ամէն ազգի քով մեկնաբաններ։ Իմ հորիզոնէն դուրս ըլլալով այդ բոլոր մեկնաբաններն ու իրենց երկերու նկատողութիւնը, համառօտ ակնարկ մը կը նետեմ մեր թարգմանչական ու ինքնագիր մեկնութիւններու վրայ։ Ս· Գրքի մէն մի մասին հայոց քով եղած մեկնութիւններու նկատմամբ 1921ին գրած եմ գերմաներէն լեզուով երկ մը (Die Bibelerklärungen bei den Armeniern), որ կը յուսամ թէ ժամանակին հայերէն կամ գերմաներէն լեզուով կը տպուի։ Անկէ կ'օգտուիմ յաջորդներու համար։

1. *Հիպպողիտոս* († 236), յանուն Հիպպողիտոսի ձեռքերնիս ունինք երկու մեկնութիւն, մին վաւեր եւ միւսն անվաւեր։ Երկուքն ալ հայերէն թարգմանութիւն ունեցած են։ Վաւերականին թարգմանութեան ապացոյց է հայերէնի վրայէն կատարուած վրական թարգմանութիւն մը։ Վարդան Արեւելցին ինչպէս վաւերականէն նմանապէս անվաւերականէն բաւական հատածներ իւր համանուն մեկնութեան մէջ շարահիւսած է։

2. *Որոգինէս* († 254). Նշանաւոր անձիս մեկնութեան ծովէն շատ քիչ կաթիլներ հայ երկիրն ցօղած են։ Իւր անուամբը խորագրուած Երգ Երգոցի մեկնութիւն մը կայ հայերէն, որ սակայն ոչ Հերոնիմեան եւ ոչ ռուփինեան թարգմանութիւններու հետ կը նոյնանայ։

3. *Գր. Նիւսացի* († 394). Գրիգոր Նիւսացին գրած է Երգ Երգոցի մեկնութիւն մը եւ անկէ օգտուած է՝ Գրիգոր Նարեկացին իւր համանուն երկին մէջ։ Այդ երկը Նարեկացին իրեն առաջնորդ ունեցած է ըստ Fr. Müllerի հայերէն թարգմանութեամբ (Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, VIII, էջ 209)։

4. *Գր. Նարեկացի* († 1003). Երգ Երգոցի առաջին հայաշուրթն մեկնիչը կը ճանչցուի Գրիգոր, "Նարեկ՝ աղօթամատոյցի հեղինակը։ Հազիւ 26 տարու էր երբ Գուրգէն խաչիկ Սրծրունիի հրամանովը Սողոմոնի այս գրքին մեկնութեան կը ձեռնարկէր՝ ձեռնտու ու-

digitised by

նենալով Գրիգոր Նիւսացին։ Այլաբանօրէն է մեկնութիւնը, առ այդ կը միտեցնեն զինքը գրքին բովանդակութիւնը, իւր աղբիւրները եւ իր սիրտը — ներանձնական կեանքի հետեւողը դիւրաւ եւ անսայթաք կրնար թռչիլ այլաբանութեան գաւառը եւ հոն ճարակ գտնել իւր հոգւոյն եւ գրչին։

5. Ներսէս Լամբրոնացի († 1198). ինչպէս Սողոմոնի միւս գրութիւններու այսպէս եւ Երգ Երգոցի մեկնութիւնը Ներսէս գրած կը թուի ըստ Զարբանելեանի (Հայկական հին դպրութեան պատմութիւնը. Վենետիկ 1897, էջ 657)։

6. Վարդան Արեւելցին († 1269—1271) տուած է «Պարզութիւն յԵրգս Երգոյն». այս մասին այլուր խօսած եմ. հմմտ. Յովհ. Վանական եւ իւր դպրոցը, Վիեննա 1922, էջ 63—64։

7. Գրիգոր Տաթեւացի. «Եռամեծի եւ տիեզերալուր վարդապետի աշակերտին մեծին Յոհաննու Որոտնեցւոյ Գրիգորի Տաթեւացւոյ արարեալ համառօտ լուծմունք քաղուածոց Երգոց Երգոյն Սողոմոնի», (Հմմտ. Տաշեան՝ Ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա 1895, էջ 827—828, թ. 374)։

8. Յովհաննէս Կարնեցի († 1740) եւ Յակոբ Կարնեցին ալ գրած են Երգ Երգոցի մեկնութիւններ, ինչպէս նաեւ Աբրահամ Կ. Պոլսեցին, որ Շումանոյ քաղքին հովիւն էր (ՌՄԶԳ Հայկական թուին)։ (Յակոբ Կարնեցւոյ մեկնութենէն ծանօթ է մեզի ձեռագիր մը մեր մատենադարանէն (թ. 736), որ ամբողջական բնագիր մը չէ)։

Հայ այս մեկնիչներն իրենց առջեւ ունեցած են ընդհանրապէս նախընթացներուն երկերը եւ առաւել կամ նուազ անոնց գաղափարներովն իրենց գրիչը բեղմնաւորած։ Մէջերնին ամէնէն գնահատելին Գրիգոր Նարեկացին է։

Մեր տաղասացներն եւս (Կոստանդին Երզնկացի, Գրիգոր Աղթամարցի, Յովհաննէս Թլկուրանցի եւն եւն) սիրով եւ բաւական յաջողութեամբ գիտցած են իրենց գրիչն Երգ Երգոցի գեղեցիկ ասութիւններովը զարդարել եւ երբեմն զանոնք մեկնելու ալ համարձակիլ։

7.

Բնագիր։

—

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ՈՐ-Ե

Աւրհնութիւն Աւրհնութեանց ասացեալ Սողոմոնի։

ԳԼՈՒԽ Ա.

1. Հարսն ասէ. Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ։ Զի քաղցր են ստինք քո քան զգինի։ Եւ հոտ եւղոց քոց քան զամենայն խունկս։
2. Եւղ թափեալ է անուն քո։ Վասն այսորիկ աւրիորդք սիրեցին զքեզ եւ ձգեցին զքեզ յինքեանս։
3. Զհետ քո ի հոտ եւղոց քոց ընթասցուք։ Հարսն պատմեն աւրիորդացն. Տարաւ զիս արքայ ի սենեակ իւր։ Հարսինն ասեն աւրիորդքն. Ցնծասցուք եւ ուրախ լիցուք ի քեզ եւ սիրեսցուք զստինս քո քան զգինի։
4. Հարսն ասէ. Սեաւ եմ ես եւ գեղեցիկ դստերք Երուսաղեմի։ Իբրեւ զվրանն կեդարու, իբրեւ զխորանն Սողոմոնի։

∧ = չունի։ + = կը յաւելու։ Խորագիր. D ∧ օրհնութիւն օրհնութեանց. FS Սաղմոնի. D Սաղովմոնի. B Սողոմոնի. ACEHKZ + արքայի Իսրայէլի. H (լուսանցքին վրայ) արքայի Իսրայէլէ։ L + որ երբայեցերէն ասի սիրհասիրիմ։

Գլ. Ա. 1. Zn Երգ Երգոց Հարսն ասէ Սողոմոնի. Համբուրեսցէ. D հարսն ցփեսայն ասէ. BCDFLSZn վասն զի. ABCDEKLNPZZn բարի են. ABELZ իւղոց. D եղոց. ABD խունկս։

2. AEKSZ իւղ (եւղ) անոյշ հեղեալ է. CFGLSWZn իւղ (եւղ) թափեալ. H եղ (ի լուսանցս) թափեալ է. KLSZn այնորիկ. ABCDEFKLONSZ ∧ յինքեանս։

3 AEKZ զհետ հոտոյ իւղոց քոց ընթասցուք. AEHZ + մեք. O օրիորդքն պատասխանի տան հարսինն վասն փեսային, զոր ինչ շնորհեացնմա. BCDEFNSZ Օրիորդացն պատմէ հարսնն վասն փեսային, զոր ինչ շնորհեաց նմա. BCDEKZ հարսինն պատմեալ օրիորդացն եւ նորա ասեն. N հարսն պատմէ օրիորդացն եւ նորա ասեն. O օրիորդքն ասեն. AHZ լիցուք մեք ի քեզ. BCDEFKZZn օրիորդքն հարսինն բարբառին զանուն փեսային. P օրիորդք փեսային բարբառին հարսինն. Zn օրիորդքն փեսային բարբառին զանուն հարսինն. ABCDEFHKNOPSWZ ուղղութիւն սիրեաց զքեզ։

4. D որպէս զվրանն. AEZ զվրանս. D Սաղովմոնի. FS Սաղոմոնի. L Սալոմոնի։

5. Մի հայիք յիս, զի ես սեւ եմ սեւացեալ։ Զի անտես արար զիս արեգակն։ Որդիք մաւր իմոյ մարտեան ընդ իս։ Եդին զիս պահապան յայգեստանին։ Զայգին իմ ոչ պահեցի։ Աւրիորդք փեսային տան զանուն հարսինն. Ուղղութիւն սիրեաց զքեզ։

6. Հարսնն ցփեսայն ասե. Պատմեա ինձ, զոր սիրեաց անձն իմ։ Ո՞ւր հովուես, ո՞ւր հանգուցանես ի մեջաւրեի։ Գուցե լինիցիմ իբրեւ զընկեցեալն ի հաւտից ընկերաց քոց։

7. Փեսայն ցհարսն ասե. Եթէ ոչ ծանիցես զքեզ գեղեցիկդ ի կանայս։ Ել դու զհետ գաբշապարաց հաւտիցն։ Եւ արածեա զուլս քո ի վրանս հովուաց։

8. Փեսայն ցհարսն ասե. Ձիոյն իմոյ ի կառսն Փարաւոնի նմանեցուցի զքեզ մերձաւոր իմ։

9. Քանզի գեղեցկացան ծնաւաք քո իբրեւ զտատրակի։ Պարանոց քո իբրեւ զմանեակ։

10. Աւրիորդքն ասեն ցհարսն. Նմանութեամբ ոսկւոյ արասցուք քեզ հանդերձս կիտուածովք արծաթոյ։

11. Մինչ թագաւորն ի գիրկս իւր ընկալցի զքեզ։

12. Հարսն ցանձն եւ ցփեսայն ասե. Նարդոս իմ ետ զհոտ իւր։ Ծրար ստաշխի է եղբաւրորդին իմ ինձ։ Ի մեջ ստեանց իմոց հանգիցե։

13. Ողկոյզ ծաղկեալ եղբաւրորդին իմ ինձ, ի մեջ այգեստանին Ենգադդայ։

14. Փեսայն ցհարսնն ասե. Ահաւադիկ ես գեղեցիկ մերձաւոր իմ, ահաւադիկ ես գեղեցիկ, աչք քո աղաւնիք։

15. Հարսն ցփեսայն ասե. Ահաւադիկ ես բարի եղբաւրորդի իմ, այլ եւ գեղեցիկ։ Առ գահոյս մեր հովանաւոր։

16. Գերանք տանց մերոց մայրք։ Դարաւանդք մեր նոճք։

ԳԼՈՒԽ Բ.

1. Փեսայն ցիւր անձն եւ ցհարսն ասե. Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց։

2. Փեսայն ցհարսն ասե. Որպէս շուշան ի մեջ փշոց այնպէս քոյր իմ ի մեջ դստերաց։

---

5. AEKZ մի հայիք ընդ իս. AEKZ զի ես սեւացեալ Թխացայ. LNZn զի ես եմ սեւացեալ. BCDF LPSZn վասն զի. EZ քանզի. AEKZ խեթիւ հայեցաւ ընդ իս արեգակն BCFLNOPSZn խեթիւ հայեցաւ յիս արեգակն. H վասն զի անտես խեթիւ հայեցաւ յիս արեգակն. BCDELNPZ եւ եդին. BFLPSZn յայգեստանի. AEZ այգեստանի. BCDELNPZ զի զայգին իմ. ամէնքը՝ «ուղղութիւն սիրեաց զքեզ» ունէին 3 դ համարին մէջ, հմմտ. անդ։

6. BCD Ցփեսայն ասէ հարսն։ O հարսն ասէ ցփեսայն. D սիրեացդ. H ո՞ր հովես. W ∧ ո՞ւր հանգուցանես. BDFHOSZn մի գուցէ. C զի գուցէ. A ընկեցեալն յերամակս ընկերաց քոց. B զընդեցեալն ի հօտս ընդերաց. CFKLSZn զընկեցեալն ի հօտս ընկերաց. ENZ իբրեւ զընկեցեալն յերամակս ընկերաց քոց. D որպէս զարդարեալ յերամակս ընկերաց քոց։

7. BCDEKOZ ծանիցես զանձն քո. L ծանիցես քո. AEZ ելեր. K քաբշապարաց հօտից. Z արածես. D զուլսն քո։

8. CDEOZ ∧ կարմրագիրը՝ F դարձեալ փեսայն ասէ. AEKZ երիվարացն իմոց. KL Փարաւոնի CHNZn նմանեցուցից. DKZ մերձաւորդ։

9. B օրիորդք ցհարսն. CEFNZ օրիորդք ասեն, K օրիորդքն ասեն. BJ դ ծնօտ քո քան զտատրակի. D որպէս զտատրակի. W տատրակի. AEZ զմանեակս. D որպէս զմանեակս։

10. BCDEFSZ ∧ օրիորդքն ասեն ցհարսն. ABCDEFJ մբ OSWZ նմանութիւն. B ոսկոյ. CFSZn արասցուք զքեզ. ACDELOZ հանդերձ կիտուածովք. B կիտուածովք։

11. ABDELZ Մինչեւ. ABCDEFLOSZ արքայ. DZn ի գիրկս ընկալցի. B ընդալցի։

12. DEFKONSZ ցիւր անձն. B ∧ կարմրագիրը. A նարթոս. D նարդոս իմն BCDFLNSZn Բուրեաց. H ∧ իւր. BCEKZ ստաշխին. ADFLSZn ծրարս տաշխին. M (բն.) ծրարս տաշխի. N ∧ ինձ։

13. BC Ողկոյզ ծաղկեալ է. D ողկոյզ ծաղկի է. AEKSZ ողկոյզ նոճոյ է. LZn ողկոյզ ծաղկեալ. B եղբօրորդիմ ինձ. (sic) ACDHEFKOZ այգեստաննեացն. D Ենգադդեայ Zn Ենգադեայ. N այգեստաննեայց Ենգադայ։

14. BFL Ահաւասիկ ես. D ահավադիկ. EZ կաս. AKO կաս գեղեցիկ իմ. C ես գեղեցիկ իմ. AO ∧ մերձաւոր իմ. DL ահաւադիկ. EZ կաս FLS աչք քո աղաւնոյ. N ահաւադիկ ես մերձաւոր իմ, ահաւադիկ ես գեղեցիկ իմ. աչք քո աղաւնիք։ W փեսայն ցհարսն ասէ. ահաւադիկ ես գեղեցիկ. աչք քո աղաւնիք, ահաւադիկ ես գեղեցիկ մերձաւոր իմ։

15. D Ահաւադիկ. N ահաւադիկ եղբօրորդին իմ. AEKZ կաս բարենշան. LSZn գեղեցիկ եղբօրորդի իմ եւ վայելուչ. EKZ եղբօրորդեակ. H ∧ իմ. ABCDEOPSZn հովանաւորք։

16. F Մարք. EZ դարանաւանդք մեր նոճք. H դարաւանդ. AH նոճ. FS նոճիք. O մանդակք մեր նոճիք։

ԳԼ. Բ. 1. BCFOSZn փեսայն ցհարսնն յաղագս անձին իւրոյ ասէ. A ծաղիկ իմ. AS եւ շուշան D ծաղիկ դաշտաց, ծաղիկ հովտաց։

2. BCEZ ∧ կարմրագիրը. ABCZ իբրեւ շուշան. AEZ ի մեջ փշոց. այնպէս մերձաւորդ իմ, ի մեջ դստերաց. LZn այնպէս է քոյր իմ. DN այնպէս մերձաւորն իմ։

3. Յփեսայն հարսն դարձուած. Որպես խնձոր ի փայտ(ս) անտառաց այնպէս եղբաւորդին իմ ի մէջ որդւոց։ Ընդ Հովանեաւ նորա փափագեցի նստել եւ նստայ։ Եւ պտուղ նորա քաղցր ի սոսորդի իմում։

4. Հարսն ցաւրիորդսն ասե. Մուծեք զիս ի տուն գինւոյ։ Կարգեցեք ի վերայ իմ զսէր։

5. Հաստատեցեք զիս իւղովք, կուտեցեք զիս խնձոր։ Զի խանդակաթ սիրով եմ ես։

6. Ահեակ նորա զգլխով իմով։ Եւ աջ նորա պատեսցե զիս։

7. Հարսնն ցաւրիորդսն ասե. Երդմնեցուցից զձեզ դստերք Երուսաղեմի ի զաւրութիւնս եւ յուժգնութիւնս անդաստանի։ Եթե յառնիցեք զարթուսջիք զսերն մինչեւ կամեսցի։

8. Հարսն լուեալ զձայն փեսային ասե. Ձայն եղբաւրորդւոյն իմոյ ահա առ դրանն, ահա սայ եկն։ Վազելով ի վերայ լերանց, խայտալով ի վերայ բլրոց։

9. Նման ե եղբաւրորդին իմ այծեման կամ որթուց եղանց ի վերայ լերանց Բեթելայ։ Հարսն նշան տայ զփեսայեն աւրիորդացն. Ահաւասիկ սայ եկաց զկնի որմոյն մերոյն։ Ցեռեալ ընդ պատուհանն, հայեցեալ ընդ վանդակապատսն։

10. Պատասխանի տայ ինձ եղբաւրորդին իմ եւ ասե։ Արի՛, ե՛կ, մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ։

11. Զի ձմեռն եանց։ Անձրեւք հեռացան եւ գնացին ինքեամբ։

12. Ծաղիկք երեւեցան յերկրի մերում։ Ժամանակ յատանելոյ եհաս։ Ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում։

13. Թզենի արձակեաց զբողբոջ իւր։ Այգիք ծաղկեցան, ետուն զհոտ իւրեանց։ Արի՛, ե՛կ, մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ։

14. Ե՛կ ի հովանի վիմին մերձ առ նախապարիսպն։ Ցոյց ինձ զդեմս քո եւ լուսոյ ինձ զձայն քո, զի ձայն քո քաղցր ե, դեմք քո գեղեցիկ։

15. Փեսայն ցաւրիորդսն. Կալարուք մեզ

---

3. BCDEKNOZ հարսնն ցփեսայն ասէ. ACEKNOZ իբրեւ. BFKOS խնձոր ի փայտս անտառի. EZ իբրեւ խնձորի ի փայտս անտառի. Zn իբրեւ զխնձոր ի փայտս անտառաց. C որ ի փայտս անտառաց. AZn ի մէջ DWZn որպէս խնձոր ի փայտս անտառաց. L այնպէս է. ARZ եղբօրորդիդ. ծառոց անտառի. O եղբօրորդի իմ. ABCDEFLOSZ ի մէջ ուստերաց. N ի մէջ դստերաց. AKSZ ցանկացայ նստել. J զ փափագեցի նստիլ. BFLOSZn փափագեցի եւ նստայ. D նստա. CEFLSZ քաղցր է. բոլոր ձեռագիրներն ու տպագիրներ՝ ի կոկորդի իմում. N քաղցրացաւ ի կոկորդ իմ.

4. BCEDENOZ Ցօրիորդսն հարսնն ասէ. DN տարայք զիս. C գինոյ. C զսերն։

5. AZ Իւղով. BCEFOS հաւաքեցէք զիս խնձորս. A հաւաքեցէք ինձ. A խնձորս. DFS խնձորս. BCFLOSZn վասն զի խանդակաթ DEZZn եմ ես սիրով. AZn եմ ես սիրոյ։

6. AEKJեZ Ձախ նորա ընդ գլխով իմով. O ձախ նորա ի վերայ գլխոյ իմոյ. BCDFLSZn ահեակ նորա ի վերայ (B ի վերա) գլխոյ իմոյ. BCFJբOSZn պատեսցի. ADEFJեKLZ գինեւ. JզZn աջ նորա ընդ գրկեսցէ զիս. W պատիցէ զինեւ։

7. ACDEFLSZ Երդմնեցու։ ցանեմ. A յանդաստանի. Zn յառնիջիք. Zn զսերն իմ։

8. EZ Լուաւ. BCDEFSZZn ∧ հարսն. MZn եղբօրորդւոյ իմոյ առ դրանն. ABCDMSZ եղբօրորդւոյ իմոյ, ահաւասիկ սա եկեալ ELZ∧ առ դրանն. AKZ վազս առնու ի վերայ լերանց. FS խայտացեալ ի վերայ բլրոց. AKZ խաղաղացեալ ի վերայ բլրոց։

9. BDN Որթու եղանց, W ի վերայ եղանց Բեթելայ. B ի վերա... Բեդելա. C նշանակ տայ. BCDEKOZ Օրիորդացն զփեսայէն. AEKZ սա (ե)կաց յայնկոյս. BCDjFLSZn յետուստ որմոյն. O որմոյն մերոյ. K յերեալ ընդ պատուհանն. AEZ կարկառեալ ընդ պատուհանն(ն). O կարկառեալ ընդ պատուհանսն. C յառեալ BDDjFLS յառեալ ընդ պատուհանն. KZ ընդ վանդակապատն. M (ընդ գերբ) ընդ վանդակապատան.

10. DLN Եւ. ADO∧ ինձ. BCKS իմ ինձ. W արի, արի. D աղաւնի իմ գեղեցիկ իմ։

11. BCDLSZn վասն զի. W վասն զի ահաւասիկ ձմեռն եանց. ABCDESZ ահա ձմեռն. ABEZ անց. ABCDLOSZ անձրեւք անցին եւ գնացեալ մեկնեցան. N անձրեւ հեռացաւ. Zn անձրեւք հեռացան եւ գնացին ինքեամբ. H գնացին ինքեամբ (∧եւ). W անձրեւք անցին եւ գնացին ինքեամբ։

12. A∧ Ցերկրի. AEOZ ժամանակ եհաս յատանելոյ. L ժամանակ յատանելոյ էհաս. Dj ժամանակ հատանելոյ էհաս. K եհաս հատանելոյ. N յատելոյ AKO եղեւ երկրի մերում. BCD∧ մերում։

13. BDjFLS Ընձիւղեաց զբողբոջ. CZn ընձիւղեաց զբողբոջ. AD զբողբոջս իւր. BCDjFLS այգիք մեր. AEOZ որթք մեր. AEKZ ծաղկեալք; CDN ծաղկեցին. O ծաղկեալ եւ ետուն զհոտ իւրեանց. BCDLSZn զհոտս. AKLOZ+ եւ եկ դու աղաւնեակ իմ. N եւ եկ աղաւնի իմ։

14. ABDDjEFKLOSZ ընդ հովանեաւ. ADEKNOZ վիմիդ։ N ի հովանի վիմին մերձաւոր իմ առ նախապարիսպն. AEKOZ պատուարաւ պարսպիդ. DN մերձ ի պատուար պարսպիդ. A։ Z երեւեցո ինձ զերեսս քո. O երեւեցոյ զերեսս քո. CL ցոյց զդէմն ABCDELNZ եւ լսելի արա ինձ զբարբառ քո. O եւ լսելի արա զբարբառ քո. CLNS վասն զի. AEKOZ զի բարբառ քո քաղցր(է) եւ տեսիլ քո գեղեցիկ. BCDDj դէմք քո գեղեցիկք։

15. BCDEFNOSZ Ցօրիորդսն փեսայն ասէ (զայս ինչ). AKZn աղուեսս մանրկունս. EZ աղուեսունս մանրկունս. O մանուունս. H փոքրկունս. AEZ եւ որթք

աղուեսունս փոքրունս զապականիչս այ-
գեայցն եւ այգիք մեր ծաղկեալ են։
16. Հարսն ասե. Եղբաւրորդին իմ ինձ եւ ես
նմա, որ հովուեն ի շուշանս։ Մինչեւ
տիւն նուազեսցի եւ շարժեսցին ստուերք։
17. Դարձիր, եղբաւրորդի իմ, նմանեաց այ-
ծեման կամ որթուց եղանց ի վերայ լերանց
խնկաբերաց։

ԳԼՈՒԽ Գ.

1. Հարսն ասե. Ցանկողնի իմում ի գիշերի
խնդրեցի, զոր սիրեաց անձն իմ։ խնդրեցի
զնա եւ ոչ գտի։ կոչեցի եւ ոչ լուաւ ինձ,
2. Յարեայ եւ շրջեցայ ի քաղաքս, ի փողոցս
եւ ի հրապարակս։ Խնդրեցի եւ ոչ գտի.
3. Գտին զիս պահապանք պարսպացն։ Մի թե
զոր սիրեաց անձն իմ տեսէք։
4. Իբրեւ փոքր մի անցի, գտի զոր սիրեաց
անձն իմ։ Կալայ զնա եւ ոչ թողի զնա։

մեր ծաղկեսցեն. K եւ որթք մեր ծաղկեսցին. Zn եւ զի այգիք մեր FLS եւ այգիք մեր ծաղկեսցին. N զի այգիք մեր ծաղկեսցին։

16. W Հարսն ցփեսայն ասէ. DENZ հարսն ասէ զայս ինչ. D հովէն. ABCDEFHLONSZ ի մէջ շուշանաց. F մինչ. A նուազեսցէ. W լուսաւորեսցի. EKZ լուսաւորեսցէ. BCFLSZn շնչեսցէ. ABEFZ եւ ստուերքն) շարժեսցին. BCL շարժեսցին ստուերքն։

17. K Եղբօրորդի դու. AO նմանեաց դու եղբորորդի իմ այծեմանց. D որթոյ. BCDEFLSZ դարձիր նմանեաց (դու) եղբօրորդի իմ այծեմանն. W դարձեալ նման է եղբօրորդին իմ այծեման. B ի վերա. CD խնգաբերաց. Zn ի վերայ լերանց հովտաց. Dj փախիր եղբորորդեակ իմ եւ նմանեաց այծեման կամ որ թուց եղանց։

ԳԼ· Գ· 1. BCDEFSZ ∧ Հարսն ասէ. D յանգողնի. G ի գիշերի յանկողնոյն խնդրեցի եւ ոչ գտի. A եւ ի գիշերի. B խնդրեաց. D եւ ոչ գտի զնա. W կոչեցի զնա. AB3DDjEFLNOSZ եւ ոչ ետ ինձ ձայն։

2. ABCDEFKLSWZ Յարեայց եւ շրջեցայց. O յարեա եւ շրջեցա. AEFKZ ընդ քաղաքն, ընդ փողոցս եւ ընդ հրապարակս. DMW ընդ քաղաքս. CDjLSZn ընդ քաղաքն, ի փողոցս եւ ի հրապարակս.

3. ABDLZ պահապանքն. ABCFFLSZ + որ(ք) շրջէին ընդ քաղաքն. N որ շրջէին ի քաղաքին. D որ շրջէին ընդ քաղաքս. ABDELZ ∧ պարսպացն. Jժգ հարսն ցպահապանսն քաղաքին ասէ. FOS փեսայն ցպահապանսն քաղաքին ասէ. BCD հարսն ասէ ցպահապանսն քաղաքին. N հարցի ցնոսա. FLS տեսէք. Dj եւ ասեմ. W հարցի՝ թէ զոր սիրեաց անձն իմ, տեսէք։

4. AEFK Սակաւ մի անցի. CDNS փոքր ինչ. ACDFNLSZn անցի ընդ նոսա. DjFOZ անցի ըստ նոսա. BCDEKZ գտեալ զփեսայն ասէ. FOS գտեալ զփեսայն հարսն ասէ· B կալա. DFS ոչ թողից զնա. H մուծցի. Մինչեւ մուծի զնա ի տուն մաւր իմոյ եւ ի սենեակ յղացելոյն զիս։

5. Հարսն ասե. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղեմի ի զաւրութիւնս եւ յուժգնութիւնս անդաստանի։ Եթե յառնիցէք զարթուսջիք զսերն մինչեւ կամեսցի։

6. Աւրիորդքն ասեն. Ո՞վ է սայ, որ ելանէ յանապատէ իբրեւ զծուխս ծառացեալ բարձրացեալ։ Զմիւռս եւ կնդրուկս յամենայն փոշոյ եւաղագործաց։

7. Աւրիորդքն ասեն. Ահա գահոյք Սողոմոնի։ Վաթսուն սպառազէն շուրջ զնովաւ ի զաւրաւորացն Իսրայելի։

8. Ամենեքեան սուսերաւորք եւ հմուտք պատերազմի։ Այր իւրաքանչիւր սուսեր յազդեր յարհաւրաց գիշերուոյ։

9. Գահաւորակ իւր արար արքայ Սողոմոն ի փայտից Լիբանանու։

10. Զսիւնս նորա (գործեաց) արծաթեղենս եւ

W մուծից. Dj տարայ. ABCDEFKLOSZ մինչեւ տարայց զնա։

5. BCDN Զօրիորդսն երդմնեցուցանէ այս երկրորդ անգամ հարսն (D) եւ ասէ. EFOSZ զօրիորդսն երդմնեցուցանէ երկրորդ անգամ հարսնն (եւ ասէ). A երդմնեցուցի. DEKZ երդմնեցուցից. AEKOZ եւ ի հաստատութիւնս ագարակի. D յուշղնութիւնս. Zn յառնիջիք։

6. BCDFKNOSZ փեսայն վասն հարսինն ասէ. ARO աս ելեալ գայ. B ելանէս. BFZn զստեղն ծխոյ խնկեալ. խնգեալ. CNS (զ)ստեղն ծխոյ խնկեալ. D որպէս զստեղն խնգոյ ծխեալ։ H զծուխ ծռեալ. ABCDEFKLNSZ կնդրուկ. A փշոց. L փոշեաց իւղեփեցաց. BSZn փոշեաց եւղեփեցեաց. N փոշեաց անոյշ իւղոց. D փոշեաց անուշեղաց. C փոշեաց եղեփեցաց. O փոշեաց իւղագործաց, EZ փոշւոյ իւղագործաց։

7. BCEFKOS Օրիորդք ասացին զայս ինչ. D Օրիորդք ասացին զայս. D Սաղամոնի. FS Սաղոմոնի. B Սաղամոնի. C Սաղոմոնի. L Սալոմոնի. DL վատսուն. BCDFNSZn զօրաւորք. AEOZ սառազէնք։ AFKOMZ ի քաջացն Իսրայէլի. Zn Իսրայէլ։

8. D ամենեքին ունին սուր եւ ուսեալք պատերազմ. N ամենեքեան ունին. զպատերազմ. W ամենեքեան սուսերաւ որք հմուտք պատերազմաց. L իւրաքանչիւր. EZ ∧ եւ AEK սուր յազդեր. D ∧ սուր. EZ սուր. BFSZn զսուր իւր ի վերայ ազդեր իւրոյ ի զարհուրանաց. H սուր յազդերէ յար հզօրաց գիշերոյ. C զսուր իւր ի վերայ ազդերի իւրոյ ի զարհուրանաց. D յարհուրանաց. AD գիշերայնոց. O գիշերայնւոյ. CESWZ գիշերոյ։

9. ASZ Արար իւր գահաւորակ. FS Սաղոմոն. D Սաղամոնի. B Սաղամոն. L Սալոմոն. ABCEZ ի փայտից։

10. ADEJեKZ Զսիւնս նորա (AD արար) գործեաց արծաթիս, գկոնք նորա ոսկի եւ զձեղուն նորա ծիրանի եւ զմէջ նորա ականակաց· ՀԱՄ, 1924, էջ 219 M եւ Z իբարու խառնուած են, ինչպէս նաեւ դժբախտութեան մի եւ բացակայութեան մի հետեւանքով յունարէնի մէջ սխալներ մնացած. BCFLS զսիւնս արար

զկողմանս ոսկեղէնս, զխարիսխն ծիրանիս, զմէջ նորա ականակապ ի սեր դստերացն Երուսաղեմի։

11. Եւ՝ Հայեցարուք դստերք Սիոնի յարքայ Սողոմն ի պսակն որով պսակեաց զնա մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ եւ յաւուր ուրախութեան սրտի նորա։

ԳԼՈՒԽ Դ.

1. Փեսայն ցհարսն ասէ. Ահաւադիկ ես գեղեցիկ մերձաւոր իմ։ Ահաւադիկ ես, գեղեցիկ, աչք քո աղաւնիք։ Բաց ի լռութենեդ քումմէ։ Վարսք քո իբրեւ զերամակս այծեաց, որք երեւեցան ի Գաղաադէ։

2. Ատամունք քո իբրեւ զերամակս կտրելոց, որք ելանեն ի լուալեաց։ Ամենեքեան երկուորիք եւ անորդի ոչ գոյ ի նոսա։

3. Իբրեւ զլար կարմիր շրթունք քո եւ խաւսք քո գեղեցիկ։ Իբրեւ զկեղեւ նռան այտք քո առանց լռութեան քո։

4. Իբրեւ զաշտարակն Դաւթի պարանոց քո շինեալ ի Թալպիովդ։ Հազար վահան կա-

---

արծաթեղէնս եւ զսնարսն ոսկեղէն եւ զխարիսխն ծիրանի եւ զմէջն։ O զսիւնս նորա արար արծաթիս զկոնք նորա ոսկի եւ զձեղուն նորա ծիրան. W զխարիսխն ծիրանիս. N զսիւնս նորա արար արծաթի եւ զկոնք նորա ոսկի եւ զձեղուն նորա ծիրանի եւ զմէջ նորա ականակապ տարածեալ, ի սեր դստերացն Երուսաղեմի. ACBDEFKOSZ տարածեալ զսէրն ի դստերացն։

11. DEHNZ Եւ՝ եւ Հայեցարուք. A Սիոնի. Եւ՝ եւ տեսէք. WZn դստերք Երուսաղէմի. A Սիոնի. FKLS Սիոնի. D Սաղամոնի. FS Սաղոմոն. L Սալոմոն. C յարքայն Սողոմոնի. B Սաղամոն զպսակն. ADEZ սրտի իւրոյ. C Նորայ։

Գ.Լ. Դ. 1. N փեսայն ասէ. ահաւասիկ ես մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աչք քո աղաւնիք. W կարմրաձաւոր իմ, գեղեցիկ իմ, աչք քո աղաւնիք. D ահաւադիկ ես. B ահայ զնոսը չունի. EZ ∧ հարսն. D ահաւադիկ ես. Zn գեղեցիկ ես. SZn ահա ես BKLZn ահա ես գեղեցիկ. EZ կաս. AO կաս մերձաւոր իմ, ահաւադիկ ես գեղեցիկ իմ. D ահաւադիկ. D ∧ գեղեցիկ. EKWZ կաս. FS Աչք քո աղաւնոյ. L աղաւնւոյ. BCD բայց. BCFLSZn զհօրանս. ABEKLOZZn այծից. W այծից կտրելոց որք ելանեն ի Գաղայաթ. O Գաղայաթէ. L Գաղայադէ։

2. CD Որպէս. A երկուորիկք. EZ երկուորիք են։

3. BCFLS Լար. HLN կարմիր են. AEKOZ զթել որդան են. BC կեղեւ նռան. AEZ նռան են BCD բայց. AEFKLNZ բաց. ABCDEKLNOSZ ի լռութենեդ քումմէ։

4. D Որպէս զաշտարակն. ABDEKZ որ շինեալն է. W ի Թալփիոթ. AD ի Թալփիոթ. F, S ի Թալպիոթ. ADEKZ վահան(ք) կախեալ են զնմանէ եւ ամենայն զնետ պատազինեաց. BCZn հազար վահան(ք) կախեալ են ի նմա եւ ամենայն աշտեայք զօրաւորաց. O կախեալ

խեալ զնմանէ եւ ամենայն աշտեայք կամ նետք զաւրաւորաց կամ սպառազինաց։

5. Երկու ստինք քո իբրեւ զերկուս ուլս այծեման, որք արածին ի շուշանս.

6. Մինչեւ տիւն նուաղեսցի եւ ստուերքն շարժեսցի(ն)։ Ես ինձեն գնացից ի լեառն զմիւռոյ եւ ի բլուրն կնդրկի։

7. Ամենեւին գեղեցիկ ես եւ արատ ինչ ոչ գոյ ի քեզ։

8. Ե՛կ հարսն ի Լիբանանէ։ Եկեսցես եւ անցցես իսկզբան հաւատոյն ի գլուխ Սանիրայ եւ Ահերմոնի, ի լերանց ընծուց եւ ի մայրեաց առեւծուց։

9. Աւրիորդք ցհարսն ասեն. Սրտացուցեր զմեզ քոյր մեր հարսն։ Սրտակաթ արարեր զմեզ միով ակամբ քով եւ միով քառամանեակ պարանոցաւ քով։

10. Փեսայն ցհարսն ասէ. Քանզի գեղեցկացան ստինք քո ի գինւոյ քոյր իմ հարսն,

---

են զնմանէ եւ ամենայն նետք սրեալք սպառազինաց. FLS հազար վահան կախեալ են ի նմա եւ ամենայն նետք զօրաւորաց։ N հազար վահանք կախեալ կան զնմանէ եւ ամենայն նետք սպառազինաց։

5. D Որպէս. ADEJեOZ զերկուս ուլս երկուորիս. CZn երկու ուլս. A որ արածին. K արածիցեն. Z արածիցին. AEKOZ ի մէջ շուշանաց։

6. FLOSW Տիւն ծագեսցի. BCZn ծագեսցէ. DEKZ(M) տիւնն նուազեսցէ. ANZn տիւն պայծառասցի. Ամենքն՝ շարժեսցին. EZ գնացից ես ինձէն. ABCLZn գնացից ես առանձին ի լեառն զմիւռոյ. O գնացի ես առանձին. N գնացի առանձինն ի լեառն զմիւռոյ եւ ի բլուրն կնդրկի. W ես ինձէն գնացի ի լեառն զմիւռոյ ի բլրոյ կնդրկի. A EKZZn զմիւռենեաց.

7. DjEFLNSZ Ամենեւին գեղեցիկ ես մերձաւոր իմ. ABCD ես գեղեցիկ իմ, մերձաւոր իմ։

8. BCDFLS Եկ ի Լիբանանէ հարսն, եկ ի Լիբանանէ. AEOZ եկ հարսն ի Լիբանանէ. AEOZ անցցես ի գլխոյ հաւատոյ (Հաւատոյ) ի կատարէ Սանիրայ. BDFS ի սկզբան հաւատոյ ի գլխոյ (D ի գլխոյս) Սանիրայ եւ Հերմոնի (B Հերմոնի). EZ Հերմոնի. FS Հերմոնի. W ի սկզբան հաւատոյ ի կատարէ Սանիրայ եւ յԱհերմոնի. Zn ի սկզբան հաւատոյ ի գլխոյ. ի գլուխ Սանիրայ. N ի սկզբան հաւատոյ ի գլխոյ Սանիրայ եւ Հերմոնի. L ի սկզբանէ հաւատոյ ի գլխոյ Սանիրայ եւ Հերմոնի. AEZ ի մայրեաց առեւծուց. O ի մրուաց առեւծուց FLNS ի մրեաց առեւծուց. BCDFNOSZZn եւ ի լերանց ընծուց։

9. BCENOSZ ∧ կարմրագիրը. Zn օրիորդքն ասեն. AEKZ սրտակաթ արարեր զմեզ քոյր իմ (EZ) մեր հարսն. սրտակաթ արարեր զմեզ. BCDjFLNS քոյրն իմ հարսն, սրտացուցեր զմեզ. H քոյր իմ հարսն, սրտակաթ արայ զմեզ. Ամենքն՝ քառամանեկաւ պարանոցի քո. միայն՝ Dj ակամբ քոյով եւ երկոքուսիրք քառամանեկաւ պարանոցի քումմ։

10. CDEFNSZ ∧ կարմրագիրը. Zn փեսայն ասէ

եւ հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս։

11. Մեղը կաթեցուցանեն շրթունք քո քոյր իմ հարսն։ Մեղը եւ կաթն ի ներքոյ լեզուի քո եւ հոտ հանդերձի քո իբրեւ զհոտ կնդրկի։

12. Պարտեզ փակեալ քոյր իմ հարսն, պարտեզ փակեալ եւ աղբեր կնքեալ։

13. Առաքումն քո դրախտ նռնենեաց հանդերձ պտղով ծառոց։ Քրքում հանդերձ նարդոսիւ։

14. Նարդոս եւ նարկեզ, եղեգն եւ կինամոմն հանդերձ ամենայն փայտիւքն Լիբանանու։ Զմուռս եւ հալուե հանդերձ ամենայն ընտիր եւղաւք։

15. Աղբեր պարտիզաց եւ ակն ջրոյ կենդանւոյ եւ հոսեցելոյ ի Լիբանանէ։

16. Հարսն ասէ. Արի՛ հիւսիսի եւ եկ հարաւ։ Շնչեա՛ ի պարտեզ իմ եւ բուրեսցին խունկք իմ։

ցնարսն. ABCDELNOSZ գեղեցկացան ստինք քո քոյր իմ հարսն զի (AO քանզի) գեղեցկացան ստինք քո ի գինւոյ. DJբ առաւել քան։

11. ABCDDjEFLNZ Հանդերձից. D որպէս։

12. ACDNZ Աղբեւր։

13. D Առաքումնդ. EKZ պատգամաւորութիւն քո դրախտ նռնենեաց. AO պատգամաւորութիւն քո դրախտ հանդերձ պտղովք մրգաբերաց. Dj պատգամաւորութիւն քո դրախտ նռնենեաց հանդերձ ամենայն պտղովք մրգաբերաց իւրեանց եւ ամենայն անտառախիտ ծառոց մայրիցն Լիբանանու. EZ պտղովք. BCZn պտղովք ծառոց. FLS պտղոք. AO կիպրոս հանդերձ նարթիւ. EKZ կիպրոս հանդերձ նարդոսիւ. BDDjLN OSZn ծաղիկ հանդերձ նարդոսիւ։

14. L նարդոս եւ քրքում, եղեգն եւ կինամոն. DN նարդոս եւ քրքում, եղեգնխունկ եւ կինամոմիվ (N կինամոն). BCFSZn նարդոս, քրքում, եղեգն. AEK JեOZ նարդոս (A նարթոս) եւ քրքում, խունկ եղեգն. W նարգէս, եղեգն եւ կինամոմն. BCDjZn կինամոն. AKO կինամոմիվ. FJեS կինամոմն. Jբ եղեգն խունկ եւ կինամոմն. H կինամոն. AEKOZ ամենայն գլխաւոր խնկոք. AOJեZ ծառովք. EKZ ծառոք. BCDZn հանդերձ ամենայն փայտիւք Լիբանանու. N հանդերձ առաջին ամենայն իւղովքն. W հանդերձ առաջին ամենայն իւղովք. BZn հանդերձ ամենայն առաջին իւղով. D հանդերձ ամենայն եղովքն. O ամենայն խնկովք. FLS հանդերձ ամենայն առաջնովք իւղովքն։

15. CN Աղբեւր. այլք աղբիւր. AEFKOZ աղբիւր բուրաստանաց. BCDDjLNZn ջրհոր ջրոյ. AEKOZ բղխեալ ի Լիբանանէ. Dj բղխեցելոյ ի Լիբանանէ.

16. BCDEOZ ∧ Հարսն ասէ. O արի զարթիր հիւսիս. N զարթիր հիւսիսի. BZ հիւսիսի. D հիւսիսի. A հիւսուսիւ. FS արի հիւսիս. B շնչեայ. DO շնչեցէք. A շնչացէք. D խունկն իմ։

(Շարունակելի։)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՊԱՐՍԿԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՅՈՒՂՆԵՐ

— (Շարունակութիւն։)

ԱՅՈՒՂ ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ԵՐԳԵՐԸ[1]

1. Սիրային։

ա. Հեռեվանց ծանաչում աս։

Աղ՝ղը։ Հեռեվանց ճանաչում աս,
Բլբուլի պէս կանչում աս.
Միշտ հետս մանն աս գալիս,
Չմոռնար դու ամանչում աս։

Եարը։ Ես բլբուլ ամ բաղի մէջ,
Աշուխների խաղի մէջ.
Իմ անուշն յիշվում ա,
Ամէն գրքի տաղի մէջ։

Աղ՝ղը։ Եփոր դու ինձ մոդ գէգաս,
Անուշ վարդի հոտ կէտաս.
Գիտեմ, որ ինձի կառնէս,
Էլ ի՞նչի ճոտ ճոտ կէգաս։

Եարը։ Ճոտ ճոտ գալն հախ ունեմ,
Վզիդ ոսկի կախ ունեմ.
Շեմ կարում աշկար անեմ,
Ես մորիցս վախ յոնեմ։

Աղ՝ղը։ Հապաս տեղն վախում աս,
Միշտ ինձանից գախում աս.
Մին օր մեր տուն ղօնախ գաս,
Գիտեմ խատրս պախում աս։

Եարը։ Ես ախչիկ ամ, նազ ունիմ,
Ոսկէ ջրաց մազ ունիմ.
Ուզում աս ինձ ճանանչես,
Մինչկուս չարգազ ունեմ։

Աղ՝ղը։ Ամէն բան մոռացել ամ,
Շատ լալով գոռացել ամ.
Քո աղիզ խատրի համար,
Ասկերէս հեռացել ամ։

Եարը։ Ես ինչ անեմ, ճար չունեմ,
Քեզնէ ավել եար չունեմ.
Աստուծուն ուրն յատնի է,
Սաթամ քեզ, զարար չունեմ։

Աղ՝ղը։ Խոսկերքրտ շատ համեղ ա,
Գարնան ծախկուկի եղ ա.
Ինչ մաղլեսում որ երթաս,
Ալլահվերդին էն տեղ ա։

---

[1] Երգերի տառական, բառական եւ այլ սխալները հրատարակում ենք անփոփոխ՝ իսկական բնագրի համաձայն։ Ա. Ե.

digitised by